Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023. «Գեղարքունիքի մարզի հաշմանդամ երեխաների բարեկեցության հաստատությունների հասանելիության բարելավման ծրագիր»

2024 թվականի մարտի 7-ին Գեղարքունիքի մարզի սոցիալական հաստատությունում տեղի ունեցավ «Գեղարքունիքի մարզի հաշմանդամ երեխաների բարեկեցության հաստատությունների հասանելիության բարելավման ծրագրի» դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը (մինչև 63,313 ԱՄՆ դոլար):

Դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտակայի և «Աստղավարդի հաշմանդամ երեխաների ծնողներ» ՀԿ-ի նախագահ տիկին Մելանյա Եփրեմյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև Վարդենիս համայնքի ղեկավար պարոն Ահարոն Խաչատրյանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ և հաստատություն այցելող երեխաներն ու նրանց ծնողները:

Այս ծրագիրը նպատակ ունի սոցիալական կենտրոնին երկու մեքենա տրամադրել, ասյպիսով ապահովելով հաշմանդամ և խոցելի երեխաների համար համապատասխան վերականգնողական և հոգեբանական թերապիայի հասանելիությունը՝ դրանով իսկ նպաստելով նրանց առողջ աճին և հոգեսոցիալական զարգացմանը: Արդյունքում ծրագրից կօգտվեն ընդհանուր առմամբ 135 երեխաներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված:

Դեսպան Առկիի ելույթը

Դրամաշնորհի պայմանագրի կնքումը
դեսպան Առկիի և տիկին Յեփրեմյանի միջև

(ձախից) Դեսպան Առկին,
պարոն Խաչատրյանը, տիկին Յեփրեմյանը

Այց հաստատություն